

| | | |
|--|--|--|
| <p>“Ecolur” Informational NGO Address: 24 Shinararneri str. 33 apt, 0038 Yerevan, Armenia E-mail: ecolurpressclub@gmail.com Web site: www.ecolur.org Tel. (37491) 92 12 64 mob.</p> |  | <p>«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ Հասցե՝ 24 Շինարարների, 33 բն. 0038 Երևան, Հայաստան Էլ. հասցե՝ ecolurpressclub@gmail.com Էլ. կայք՝ www.ecolur.org Բջջ.՝ (+37491) 92 12 64</p> |
|--|--|--|

Փոքր ՀԵԿ-երի ոլորտի բարեփոխումների վերաբերյալ օրենսդրական և ենթօրենսդրական ակտերի փաթեթը՝ մշակված «Աջակցություն նոր բարեփոխումներին փոքր ՀԵԿ-երի բնագավառում ՔՀԿ-կառավարություն երկխոսության միջոցով» ծրագրի շրջանակներում

ՄԱԶԾ/ԳԷՀ փոքր դրամաշնորհային ծրագրի աջակցությամբ իրականացված «Աջակցություն նոր բարեփոխումներին փոքր ՀԵԿ-երի բնագավառում ՔՀԿ-կառավարություն երկխոսության միջոցով» ծրագրի շրջանակներում մշակվել են փոքր ՀԵԿ-երի ոլորտի բարեփոխումներին ուղղված ՀՀ կառավարության որոշումների և ՀՀ օրենքների փոփոխությունների և լրացումների նախագծեր, տրվել են առաջարկություններ ՀՀ բնապահպանության նախարարության փորձագետների և անկախ փորձագետների մասնակցությամբ: Նախագծերը քննարկվել և հավանություն են ստացել Ծրագրի Փոքր ՀԵԿ-երի բազմաշահառու խորհրդի կողմից, որի կազմում են ՀՀ բնապահպանության, էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների, տարածքային կառավարման և զարգացման, արտակարգ իրավիճակների, նախարարությունների, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, ԱԺ բնապահպանական և գյուղատնտեսական հարցերով մշտական հանձնաժողովի, UNDP-ի, WWF-Հայաստանի, ՓՀԵԿ-երի միության, «Հիդրոէներգետիկա» ընկերության, Էկոլոգիական հասարակական դաշինքի, Օրհուս կենտրոնների ցանցի, «Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի, «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի ներկայացուցիչներ:

1. 2018թ-ի մարտի 1-ին ՀՀ կառավարությունն ընդունեց «Փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և շահագործման համար շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման չափորոշիչներ հաստատելու մասին» արձանագրային որոշումը (<https://www.e-gov.am/protocols/item/876/>), որտեղ ընդգրկված են Ծրագրի շրջանակներում փոքր ՀԵԿ-երի վերաբերյալ ստեղծված տեղեկատվական բազայի սվյալները և փորձագիտական խմբի առաջարկությունները: Որոշումը պետք է նպաստի ջրակոհամակարգի պահպանությանը և

հավասարակշռության ապահովմանը փոքր ՀԷԿ-երի կառուցման և շահագործման ընթացքում: Մասնավորապես, օգտագործվել են Ծրագրի տվյալները փոքր ՀԷԿ-երի ազդեցության տակ գտնվող գետի հատվածում բնակվող Կարմիր գրքում գրանցված ձկնատեսակների և էնդեմիկ տեսակների վերաբերյալ: Օգտագործվել են Ծրագրի՝ փոքր ՀԷԿ-երի դերիվացիոն խողովակներով գետի ծանրաբեռնվածության հաշվարկները: Ծրագրի շրջանակներում ամեն մի փոքր ՀԷԿ-ի համար արված առաջարկություններ, որոնք բնորոշ են գրեթե բոլոր ՓՀԷԿ-երին, արտացոլված են այս որոշման մեջ:

2. 2018թ-ի հունվարի 25-ին ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 927-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին, որով 33 %-ով ավելացվեց գետերում թողնվող բնապահպանական ելքը (<https://www.e-gov.am/gov-decrees/item/29855/>): Այս որոշման փոփոխության համար Ծրագրի փորձագիտական խումբը 2017 թվականի ապրիլին նամակով ՀՀ բնապահպանության նախարարություն ներկայացրել է ՋԹ-ի և դաշտային ուսումնասիրություններով արձանագրված էկոլոգիական թողքի և ջրառի տվյալների վերլուծությունն ու առաջարկությունները:
3. Ծրագրի փորձագիտական խմբի առաջարկությունների հիման վրա մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և շահագործման համար արգելված գոտիները և գետերի ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը (<https://www.e-draft.am/projects/497/about>), որտեղ նշված են հետևյալ արգելված գոտիները՝
 - բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման գոտիներ
 - բնության հուշարձանների 150 մետր շառավղով հարակից տարածքներ
 - ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման գոտիներ
 - գետերի հոսքի ձևավորման տարածքներ
 - սողանքային տարածքներ,
 - անտառային տարածքներ:

Որոշման նախագծով արգելվում է փոքր ՀԷԿ-եր կառուցել Գավառագետ, Ծակքար, Լիճք, Կարճաղբյուր(Մաքենիս), Մասրիկ, Վարդենիս, Արգիճի, Մարտունի, Ձկնագետ, Հրագդան, Աղստև, Ախուրյան, Որոտան, Արփա, Ձորագետ, Եղեգիս, Ազատ, Մարցի, Գոշ, Մեղրիգետ գետերի և Ողջի գետի Կապուտջուղ և Քաջարանց վտակների վրա:

4. Փորձագիտական խումբը կարծիք է ուղարկել ՀՀ բնապահպանության նախարարություն՝ առաջարկելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի փոփոխման նախագծում ՓՀԷԿ-երի կառուցումը «Գ» կատեգորիայից տեղափոխել «Բ» կատեգորիա, ինչի արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կգնահատվեն և ռիսկերը կդառնան կառավարելի: ՀՀ բնապահպանության նախարարությունը արել է առաջարկված

փոփոխությունները և օրինագիծ դրել է շրջանառության մեջ (<https://www.e-draft.am/projects/488/about>):

5. Փորձագիտական խումբը առաջարկել է ՀՀ բնապահպանության և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություններին բնապահպանական բաղկացուցիչ մտցնել «Հայաստանի Հանրապետության հիդրոէներգետիկայի զարգացման հայեցակարգից բխող փոքր հիդրոէներգետիկայի բնապահպանական հիմնախնդիրների լուծման միջոցառումների ծրագրում» և մշակել է միջոցառման պլան, որը ներառված է միջոցառումների ծրագրի պաշտոնական նախագծում (<https://www.e-draft.am/projects/240>):
6. Ծրագրի փորձագիտական խումբը մշակել է «ՀՀ հիդրոէներգետիկայի զարգացման հայեցակարգի միջոցառումների ծրագրի» նախագծով նախատեսված «ՓՀԷԿ-երի էկոլոգիական անձնագրերի ձևին և տրամադրման ուղեցույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի նպատակն է՝ բարձրացնել ՓՀԷԿ-երի հաշվետվողականությունը, ներդնել ներքին վերահսկման (ինքնավերահսկման) և ՓՀԷԿ-երի գործունեության խթանման մեխանիզմներ:
7. Ծրագրի փորձագիտական խումբը մշակել է «ՀՀ հիդրոէներգետիկայի զարգացման հայեցակարգի միջոցառումների ծրագրի» նախագծով նախատեսված «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից անցկացվող դիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1680-Ն և 2013 թվականի մարտի 7-ի N 519-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2017թ-ի հոկտեմբերի 19-ի, 1343 - Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագիծը և ուղարկել ՀՀ բնապահպանության նախարարություն: Նախագծի նպատակն է ՓՀԷԿ-երի կառուցման և շահագործման փուլերում ապահովել արդյունավետ բնապահպանական վերահսկողություն:
8. Ծրագրի փորձագիտական խումբը մշակել է և ՀՀ կառավարություն է ներկայացրել «Փոքր հիդրոէլեկտրակայանների բնապահպանական անձնագրի վարման կարգը և ձևանմուշը հաստատելու մասին» որոշման նախագիծը: Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է խթանել Հայաստանի Հանրապետության փոքր հիդրոէներգետիկայի ոլորտի զարգացումը և Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսների բնական օգտագործումը, լանդշաֆտների, կենսաբազմազանության և հողային ռեսուրսների պահպանության գործընթացների շարունակական ապահովումը, նվազեցնել բարեխիղճ կազմակերպություններում

ստուգումների հաճախականությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման օժանդակումը, նպաստել ջրային ռեսուրսների առավել արդյունավետ կառավարմանը և պահպանմանը, ինչպես նաև շրջակա միջավայրի վնասման կանխարգելմանը:

9. Ծրագրի փորձագիտական խումբը մշակել է և ՀՀ կառավարություն է ներկայացրել «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից անցկացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1680-Ն և 2013 թվականի մարտի 7-ի N 519-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2017թ-ի հոկտեմբերի 19-ի, 1343 - Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագիծը, որի ընդունման դեպքում ակնկալվում է լիազոր պետական մարմնի կողմից վերահողողության արդյունքում ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրական դաշտի պահանջների ամբողջական ընդգրկումը, ՓՀԷԿ-երի կառուցման և շահագործման փուլերում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների մեղմացում, ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարում:

10. Ծրագրի փորձագիտական խումբը մշակել է և ՀՀ բնապահպանության նախարարություն է ուղարկել «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը՝ շրջանառության մեջ դնելու համար: Այս օրենքների ընդունմամբ կապահովվի ջրային ռեսուրսների բանական օգտագործումը ՓՀԷԿ-երի կողմից, մասնավորապես, տարվա բոլոր եղանակներին ջրային ռեսուրսի և դրան հարակից տարածքների, ինչպես նաև այդ տարածքներում առկա բուսատեսակների և կենդանատեսակների գոյության համար կտա անհրաժեշտ ջրաքանակով ապահովման երաշխիքներ, ինչպես նաև խախտումների դեպքում համարժեք պատասխանատվություն կնախատեսվի, որպես հետագա հնարավոր խախտումների կանխման գործիք:

15.06.2018թ.